ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«23 » դեկտեմբեր 2024 թ. **N** *107-Ա*

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1-ին հոդվածի 31-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի օգոստոսի 23-ի N 06-Ն հրամանը և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի կողմից ստեղծված որակավորման հանձնաժողովի 2024 թվականի դեկտեմբերի 13-ի նիստի N 52 արձանագրությունը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի կողմից 2024 թվականի դեկտեմբերի 5-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտե ներկայացված՝ քաղաքաշինության բնագավառում 2025 թվականի հունվարի 14-ից մարտի 14-ը ընկած ժամանակահատվածում նախատեսվող շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող «Էլեկտրաէներգետիկայի և էլեկտրատեխնիկայի ոլորտի մասնագետների վերապատրաստման լսարանային դասընթացներ» միջոցառման ծրագիրը և շնորհել 50 կրեդիտ:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում այն ընդունելու մասին միջոցառման կազմակերպչին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

23.12.2024

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի կողմից 2024 թվականի դեկտեմբերի 5-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտե ներկայացված՝ քաղաքաշինության բնագավառում 2025 թվականի հունվարի 14-ից մարտի 14-ը ընկած ժամանակահատվածում նախատեսվող շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող «Էլեկտրաէներգետիկայի և էլեկտրատեխնիկայի ոլորտի մասնագետների վերապատրաստման լսարանային դասընթացներ» միջոցառման ծրագիրը ՀՀ կառավարության 2024 թվականի N 1130-Ն որոշման N 1 աղյուսակով հաստատված ձևաչափի:

Աղյուսակ N1

ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Ամսաթիվ	Ժամ	Թեմայի անվանում	Դասախոսի անուն և ազգանուն	Դասընթացների անցկացման ձևաչափը և վայրը	Միջոցառման կրեդիտները	Հավաստագրման ենթակա համապատասխան մասնագիտությունը	Մասնակցության վճարի չափը
1	2	3	4	5	6	7	8	9
1	Հունվարի 14-մարտի 14	18.30	Էլեկտրաէներգետիկայի և էլեկտրատեխնիկայի ոլորտի մասնագետների վերապատրաստման լսարանային դասընթացներ	ՀԱՊՀ Էներգետիկայի և էլեկտրատեխնիկայի ինստիտուտի էլեկտրական մեքենաներ և ապարատներ ամիոնի դոցենտներ Համբարյան Վարդան Կարապետի և Կուրղինյան Էդուարդ Վաղարշակի	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի, ք. Երևան, Տերյան 105 10-րդ մասնաշենք, 5-րդ հարկ, 10507 լսարան, <u>վերապատրաստման լսարանային դասընթացներ</u>	50 կրեդիտ	07, 08, 09, 10 մասնագիտություններ (համաձայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 23.08.2023թ. N 06-Ն հրամանի)	200.000 դրամ